Քեառսուն յերկէն կնիկ բիրիմ՝ ուղտ բառնան»։

Կուզբադին էսաց.

«Ես չէր գիտը, էնունց նիտիրն ին գերան,
Էնունց խուտիրն ին կծան.
Ինչ կ'զարկին մարդու ջան.
Լէշ կ'էնին պատուխան»։

Կնքտիր կ'ասին.—Աբա միր էրկնիր[1]) ո՞րտեղն ին։

Էսաց.

«Զիր իրկնիր ինկած ին Լօռայ դաշտ, կ'խեծան[2]).
Գեարուն որ ջրխեղեղ կ'ընը,
Էնունց ճուճ ու պուլուր կ'բիրը,
Էրէք ձե խամար եղ, չուրթան»։

Մսրամելիք դիւրբինք իտի աչիչ, զԿուզբադին տեսաւ զատնու.—ԸՀՕ, Կուզբադին կ'ծըծղայ, զՍասմայ Թալան[3]) ի բիրի խիտ։ Կանչից.—Կուզբադին, ագ[4]) ի՞նչ իլի քի, տիւ ի՞նչի չ'բիրէր Սասմայ Թալան։

Կուզբադին էսաց.

«Ես չէր գիտը՝ քեար էր կապան,
Ես գիտէր՝ դեաշտ էր դիւրան[5]),
Էնունց խուտիրն ին կծան,
Էնունց նիտիրն ին գերան.
Էզար, իրիք խարիր մարդ էրաւ պատուխան»։

Մսրամելիք էսաց.—Հայդէ, կանչէք դալալ կանչիլ, որ իմ ասքար բիրադի ժողվիք, տասուերկու տարըց բռնէք չուր վաթսուն տարին. էնկիաս խասէք, ինչ որ կայ՝ բիրադի ժողվէք, բերէք։

Էն սհաթին կանչիցին, ժողվիցին, Մսրայ քեաղքի մէյդան կայնացըցին։ Մէկ թուղթ կիրիցին, կասըդը[6]) ձեռ տուիցին, Դաւթի խամար ճամբխիցին։ Կասըդ Կասոն էլաւ, զթուղթ առից, կինաց. կինաց Սասմայ քեաղաք։

---

[1]) Էրիկներ։ [2]) Հեծեծալ։ [3]) Աւար։ [4]) Այդ։ [5]) Դուրան—հարթ, դաշտավայր։ [6]) Սուրհանդակ։